27 մայիսի 2020 թվականի N 838 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 749-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառմամբ սահմանված աշխատանքների կազմակերպման և իրականացման ու շահառուներին գումարի տրամադրման կարգը հաստատելու մասին» N 749-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) 3-րդ կետը «Լոռու» բառից հետո լրացնել «, Կոտայքի» բառով.

2) 24-րդ կետում «մայիսի 31-ը» բառերը փոխարինել «հունիսի 5-ը» բառերով.

3) 5-րդ կետով սահմանված N 1 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ձև N 1

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառմամբ սահմանված աշխատանքների իրականացման ապահովման համար անհրաժեշտ տվյալների վերաբերյալ

Հ/Հ	Գետի անվանումը	ՀՀ մարզի անվանումը	Համայնքի (բնակավայրի) և/կամ «Անտառ-տնտեսություն» մասնաճյուղի անվանումը	Տնկման ենթակա կտրոնների թիվ, հատ	Պատասխանատու կազմակերպության անվանումը, փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը
1.	Կալավան Գետիկ	Գեղարքունիք	Ճամբարակի	5000	«Հայանտառ» ՊՈԱԿ ք. Երևան Արմենակյան 129, Էլ. հասցե՝ info@hayantar.am, հեռ.՝ +374 55-65-04-22
2.	Չանախչի	Լոռի	Դսեղի	500	
3.	Շամլուղ Լալվար Ձիլիզ Լիլու		Ձիլիզայի	435000	
4.	Աղստև Չիչխան		Վանաձորի	224000	
5.	Տաշիր Դորպատու Նորաշեն Զոմչա		Տաշիրի	120000	
6.	Ծովինար Ձրամբար Դալար	Կոտայք	Հրազդանի	9000	
7.	Չիչխան Թորոս	Շիրակ	Գյումրու	10000	
8.	Որոտան Շաքի Շաղատ	Սյունիք	Սիսիանի	40000	
9.	Խնձորուտ Թթուջուր Տավուշ Հախում	Տավուշ	Արծվաբերդի	100000	
10.	Վազաշեն Գանձաքար Խաչաղբյուր Սպիտակ ջուր		Իջևանի	10000	
11.	Չայղանչի		Նոյեմբերյանի	435000	
12.	Սանաղբյուր Սամսոնա Ախսիտար		Սևքարի	12000	
13.	Կարճաղբյուր Արգիճի Մարտունի	Գեղարքունիք	Մադինա Գեղհովիտ Լճավան Կարճաղբյուր Մաքենիս	299750	«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ (համաձայնությամբ) ք. Երևան Արշակունյաց 57/5 Էլ. հասցե՝ info@armeniatree.org Հեռ.՝ +374 10-44-74-01

14.	Գնիշիկաձոր Եղեգիս Քարագլուխ Արատես	Վայոց ձոր	Արենի Եղեգիս	299750	Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ (համաձայնությամբ) ք. Երևան, Խանջյան 47/1 Էլ. հասցե՝ sona.kalantaryan@fpwc.org Հեռ՝ +37410585884, +37477110260, +37477009460:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. մայիսի 27
Երևան